

ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ I

**2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ
ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ԿԻՍԱՄՅԱԿԻ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԻՑ
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2016թ. հունիսի 30-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Վարկեր	6	256,944	547,768
Հետաձգված հարկային ակտիվներ	5	2,497	5,162
		<u>259,441</u>	<u>552,930</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Վարկեր	6	430,498	504,255
Դեբիտորական պարտքեր ֆինանսական կազմակերպություններից	7	16,859	31,363
Մնացորդներ բանկերում		59,610	140,230
		<u>506,967</u>	<u>675,848</u>
Ընդամենը ակտիվներ		<u>766,408</u>	<u>1,228,778</u>
Պարտավորություններ			
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Թողարկված պարտքային արժեթղթեր	9	177,600	426,066
		<u>177,600</u>	<u>426,066</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Թողարկված պարտքային արժեթղթեր	9	512,931	573,785
Այլ ընթացիկ պարտավորություններ	10	689	126,564
		<u>513,620</u>	<u>700,349</u>
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք	8	135,189	102,363
		<u>135,189</u>	<u>102,363</u>
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		<u>766,408</u>	<u>1,228,778</u>

Հաշվետվության վավերացման ամսաթիվ 2016թ. օգոստոսի 29

Տիգրան Կարապետյան

Արգամ Աբրահամյան

Հիմնադրամի կառավարիչ՝ «Կապիտալ
հնվեստմենթս» ՓԲԸ գլխավոր տնօրեն

Գլխավոր հաշվապահ, «Էյ-Էն Աուդիտ»
ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ



Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	01.01.2016-30.06.2016
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ		86,290
Տոկոսային և նմանատիպ ծախսեր		(49,710)
Զուտ տոկոսային եկամուտներ		36,580
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ		2,485
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	11	(9,414)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		(6,929)
		29,651
Գործառնական գործունեությունից արդյունք		29,651
Տույժերից, տուգանքներից եկամուտ		5,060
Զուտ օգուտ (կորուստ) փոխարժեքային տարբերություններից		(919)
Արժեզրկման պահուստի հակադարձումից օգուտ		4,418
Այլ ծախսեր		(2,718)
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		35,491
Շահութահարկի գծով փոխհատուցում (ծախս)	12	(2,665)
Ժամանակաշրջանի շահույթ (վնաս)		32,826
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-
Ընդամենը ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունք		32,826

Հաշվետվության վավերացման ամսաթիվ 2016թ. օգոստոսի 29

Տիգրան Կարապետյան

Արգամ Արահամյան

Հիմնադրամի կառավարիչ՝ «Կապիտալ Ինվեստմենթս» ՓԲԸ գլխավոր տնօրեն

Գլխավոր հաշվապահ, «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ



Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2015թ. սեպտեմբերի 16-ի դրությամբ	-	-
Մասնակցության վկայագրերի թողարկում	122,951	122,951
Տարվա շահույթ (վնաս)	(20,588)	(20,588)
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	102,363	102,363
Մասնակցության վկայագրերի թողարկում	-	-
Ժամանակաշրջանի շահույթ (վնաս)	32,826	32,826
2016թ. հունիսի 30-ի դրությամբ	135,189	135,189

Հաշվետվության վավերացման ամսաթիվ 2016թ. օգոստոսի 29

Տիգրան Կարապետյան

Արգամ Աբրահամյան

Հիմնադրամի կառավարիչ՝ «Կապիտալ Ինվեստմենթս» ՓԲԸ գլխավոր տնօրեն

Գլխավոր հաշվապահ, «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ



[Handwritten signature]

[Handwritten signature]

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	01.01.2016- 30.06.2016
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>	
Տարվա արդյունք	32,826
Ճշգրտումներ՝	
Տոկոսային եկամուտ	(56,290)
Տոկոսային ծախս	49,710
Շահութահարկի գծով փոխհատուցում	2,665
Արժեզրկման պահուստի հակադարձումից օգուտ	(4,418)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	265
Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	24,758
Ֆինանսական կազմակերպություններից դեբիտորական պարտքերի փոփոխություն	14,504
Վարկերի փոփոխություն	348,283
Այլ պարտավորությունների փոփոխություն	(125,875)
Գործառնական գործունեության համար օգտագործված զույր դրամական միջոցներ	261,670
Վճարված տոկոսներ	(51,923)
Ստացված տոկոսներ	78,627
Վճարված շահութահարկ	-
Գործառնական գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զույր դրամական միջոցներ	288,374
<i>Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>	
Մասնակցության վկայագրերի թողարկումից մուտքեր	-
Պարտատոմսերի թողարկումից մուտքեր	-
Պարտատոմսերի մարումներից ելքեր	(369,320)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զույր դրամական միջոցներ	(369,320)
Դրամական միջոցների զուտ աճ/(նվազում)	(80,947)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	327
Դրամական միջոցների մնացորդներ ժամանակաշրջանի սկզբում	140,230
Դրամական միջոցների մնացորդներ ժամանակաշրջանի վերջում	59,610

Հաշվետվության վավերացման ամսաթիվ 2016թ. օգոստոսի 29



Տիգրան Կարապետյան
 Հիսամյակային կառավարիչ՝ «Կապիտալ
 Ինվեստմենթս» ՓԲԸ գլխավոր տնօրեն

(Handwritten signature)

Արգամ Աբրահամյան
 Գլխավոր հաշվապահ, «Էյ-Էն Աուդիտ»
 ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ

(Handwritten signature)

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ I-ը (այսուհետ՝ Հիմնադրամ) ոչ առևտրային կազմակերպություն է, որը հիմնադրվել է 2015 թվականի օգոստոսի 31-ին «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ բացառապես արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկման գործունեություն իրականացնելու նպատակով: Հիմնադրամը 2015թ. սեպտեմբերի 16-ին գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում որպես արժեթղթավորման հիմնադրամ:

Հիմնադրամին տրամադրվել է թիվ 1 գրանցման վկայականը: Հիմնադրամը հիմնադրվել է երեք տարի ժամկետով և գործելու է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 24-ը՝ մինչև 18 ամիս երկարաձգման հնարավորությամբ:

Հիմնադրամի գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Խորենացու փողոց, 15 շենք, 2-րդ հարկ, գրասենյակ 6:

Հիմնադրամի Կառավարիչն է հանդիսանում «ԿԱՊԻՏԱԼ ԻՆՎԵՍՏՄԵՆԹՍ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հանդիսանում է նաև միակ հիմնադիրը:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Սույն միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

Ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն ՀՀՄՍԽ-ի «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 13-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ ժամանակաշրջանում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2016թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև: Չնայած այս նոր ստանդարտները և փոփոխությունները առաջին անգամ կիրառելի են 2016թ. ընթացքում, դրանք էական ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների վրա:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2016թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

2016թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտել միջարք ստանդարտներ և փոփոխություններ, որոնք սակայն էական ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա: Դրանք թվարկված են ստորև.

- ՖՀՄՍ 14 «Սակագնային կարգավորման հետաձգված հաշիվներ»
- Փոփոխություններ «Համատեղ պայմանավորվածություններ» ՖՀՄՍ 11-ում. Մասնակցությունների ձեռքբերման հաշվառումը
- Փոփոխություններ ՀՀՄՍ 16-ում և ՀՀՄՍ 38-ում. մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում

- Փոփոխություններ ՀՀՄՍ 27-ում. բաժնեմասնակցության մեթոդը առանձին ֆինանսական հաշվետվություններում
- Փոփոխություններ ՖՀՄՍ 10-ում, ՖՀՄՍ 12-ում և ՀՀՄՍ 28-ում. «Ներդրումային կազմակերպություններ. Համախմբման բացառության կիրառումը»
- Տարեկան բարեփոխումներ՝ 2012-2014թթ.

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից: Ստորև ներկայացված է տեղեկատվություն նոր ստանդարտների, փոփոխությունների և մեկնաբանությունների վերաբերյալ, որոնք նախատեսվում է, որ կիրառելի կլինեն Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների համար: Որոշ այլ նոր ստանդարտներ և մեկնաբանություններ թողարկվել են, սակայն չի ակնկալվում, որ դրանք Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն կունենան:

ՀՀՄՍ 12 (Փոփոխություններ) «Շահույթահարկեր»

ՀՀՄՍԽ-ը թողարկել է «Չիրացված վնասների համար հետաձգված հարկային ակտիվների ճանաչում» պարզաբանումը, որը ՀՀՄՍ 12-ում՝ «Շահույթահարկեր», կատարում է որոշակի փոփոխություններ: Փոփոխությունները պարզաբանում են, թե ինչպես պետք է հաշվառել իրական արժեքով չափվող պարտքային գործիքներին վերաբերող հետաձգված հարկային ակտիվները, հատկապես այն դեպքերում, երբ շուկայական տոկոսադրույքի փոփոխությունները նվազեցնում են պարտքային գործիքի իրական արժեքը սկզբնական արժեքից ցածր մակարդակի:

Սույն փոփոխությունները պարզաբանում են հետևյալը.

- այն պարտքային գործիքների գծով չիրացված վնասները, որոնք չափվում են իրական արժեքով, իսկ հարկային առումով՝ սկզբնական արժեքով, առաջացնում են նվազեցվող ժամանակավոր տարբերություններ՝ անկախ նրանից, թե պարտքային գործիքին տիրապետողն ակնկալում է վերականգնել դրա հաշվեկշռային արժեքը՝ այն վաճառելու, թե օգտագործելու միջոցով,
- ակտիվի հաշվեկշռային արժեքը չի սահմանափակում հարկման ենթակա ապագա հավանական շահույթների գնահատումը,
- հարկման ենթակա ապագա շահույթների գնահատումները չեն ներառում նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հակադարձումից առաջացող հարկային նվազեցումները,

- ընկերությունը պետք է հաշվի առնի, արդյոք հարկային օրենսդրությունն արգելում է հարկվող շահույթների այն աղբյուրները, որոնց առումով այն կարող է նվազեցումներ կատարել նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հակադարձման մասով: Եթե հարկային օրենսդրությունում չկան այդպիսի արգելքներ, ընկերությունը գնահատում է նվազեցվող ժամանակավոր տարբերությունը բոլոր այլ նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հետ համատեղ:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2017թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և պետք է կիրառվեն հետընթաց: Հիմնադրամի ղեկավարությունը դեռ պետք է գնահատի այս նոր ստանդարտի ազդեցությունը Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» (2014թ.)

ՀՀՄՍԽ-ը թողարկել է ՖՀՄՍ 9-ը «Ֆինանսական գործիքներ» (2014թ.)՝ ներկայացնելով իր ծրագրի ավարտը, ինչը պետք է փոխարինի ՀՀՄՍ 39-ին «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը»: Նոր ստանդարտն ընդարձակ փոփոխություններ է ներկայացնում ՀՀՄՍ 39-ի ուղեցույցում ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վերաբերյալ և ներկայացնում է ֆինանսական ակտիվների արժեզրկման նոր «կանխատեսվող վարկային կորուստներ» մոդելը: ՖՀՄՍ 9-ը նաև ապահովում է նոր ուղեցույց՝ հեջի հաշվառման կիրառման վերաբերյալ:

Հիմնադրամի ղեկավարությունը դեռ պետք է գնահատի այս նոր ստանդարտի ազդեցությունը Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա: Նոր ստանդարտը պետք է կիրառվի 2018թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»

ՖՀՄՍ 15-ը (հրապարակվել է 2014թ. մայիսին) պարտադիր կիրառման ենթակա է 2018թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառումը թույլատրելի է: Ստանդարտը փոխարինում է հետևյալ ստանդարտներին ու մեկնաբանություններին.

- «Կառուցման պայմանագրեր» ՀՀՄՍ 11,
- «Հասույթ» ՀՀՄՍ 18,
- «Հաճախորդի հավատարմության ծրագրեր» ՖՀՄՄԿ 13,
- «Անշարժ գույքի կառուցման պայմանագրեր» ՖՀՄՄԿ 15,
- «Ակտիվների փոխանցում հաճախորդների կողմից» ՖՀՄՄԿ 18,
- «Հասույթ. բարտերային գործարքներ, որոնք ներառում են գովազդային ծառայություններ» ՄՄԿ 31:

ՖՀՄՍ 16-ը «Վարձակալություն»

ՖՀՄՍ 16-ը գործում է 2019թ. հունվարի 1-ից սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը, եթե «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ՖՀՄՍ 15-ը նույնպես կիրառվել է: Ստանդարտը սահմանում է վարձակալության ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման սկզբունքները: Բոլոր վարձակալությունների արդյունքում վարձակալը ձեռք է

բերում ակտիվի օգտագործման իրավունք հենց վարձակալության սկզբից, և եթե վարձակալության վճարները կատարվում են ժամանակի ընթացքում, նաև ձեռք է բերում ֆինանսավորում: Հետևաբար, ՖՀՄՍ 16-ը վերացնում է վարձակալության դասակարգումը որպես գործառնական վարձակալություն կամ ֆինանսական վարձակալություն, ինչպես պահանջվում է ՀՀՄՍ 17-ով և ներկայացնում է վարձակալի մոտ հաշվապահական հաշվառման մոդել: Վարձակալը պետք է ճանաչի. ա) Ակտիվներ և պարտավորություններ բոլոր այն վարձակալությունների համար, որոնց ժամկետը 12 ամսից ավելի է, բացառությամբ եթե հիմքում ընկած ակտիվն ունի փոքր արժեք, և բ) Համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունում վարձակալության գծով պարտավորության նկատմամբ տկոսային ծախսը պետք է ներկայացվի վարձակալած ակտիվի (օգտագործման իրավունք հանդիսացող ակտիվի) գծով հաշվարկվող մաշվածությունից առանձին: ՖՀՄՍ 16-ը հիմնականում պահպանում է վարձատուի հաշվապահական հաշվառման ՀՀՄՍ 17-ի պահանջները: Հետևաբար, վարձատուն շարունակում է դասակարգել վարձակալությունը որպես գործառնական վարձակալություն կամ ֆինանսական վարձակալություն և հաշվառել այս երկու տեսակի վարձակալությունները տարբեր ձևով:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2016թ. հունիսի 30-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 476.68 ՀՀ դրամ: Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը):

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում:

3.2 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում, սկզբնական չափում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և հետագա չափումը

Հետագա չափումն իրականացնելու համար ֆինանսական ակտիվները, սկզբնական ճանաչման ժամանակ բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- վարկեր և դեբիտորական պարտքեր,
- մնացորդներ բանկերում

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են արդյունքում, թե ուղղակիորեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Հիմնադրամի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 14.2-ում:

i. Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում և ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

Ֆիքսված ժամկետներով վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ վճարված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը ձեռք է բերվում շուկայականից ցածր տոկոսադրույքով, վճարված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի արդյունքում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի վարկի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի վարկի պարտքի պահուստից:

ii. Մնացորդներ բանկերում

Հիմնադրամի դրամական միջոցները գտնվում են «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում, որը նաև հանդիսանում է թողարկված պարտատոմսերի վճարային գործակալը:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և հետագա չափումը

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են թողարկված պարտքային արժեթղթերը և այլ ընթացիկ պարտավորությունները: Հիմնադրամը ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 14.2-ում:

i. Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի, այնուհետև չափվում են ամորտիզացված արժեքով:

ii. Այլ ընթացիկ պարտավորություններ

Այլ ընթացիկ պարտավորությունները ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.3 Արժեզրկում

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղջված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից:

3.4 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող արդյունքի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

3.5 Սեզմենտային հաշվետվություններ

Գործառնական սեզմենտը հանդիսանում է Հիմնադրամի բիզնես գործառնությունների բաղկացուցիչ մասը, որոնցից այն կարող է վաստակել եկամուտ և կատարել ծախսեր, ներառյալ Հիմնադրամի այլ որևէ բաղկացուցիչ մասի հետ կապված գործառնություններից եկամուտներն ու ծախսերը: Գործառնական սեզմենտները որոշելիս Հիմնադրամի ղեկավարությունը տարանջատում է Հիմնադրամի այն կոմպոնենտները, որոնք ներառված են ծառայությունների մատուցման մեջ (բիզնես սեզմենտ) և որի համար առկա է ֆինանսական տեղեկատվություն: Բոլոր գործառնական սեզմենտների գործառնական արդյունքները պարբերաբար վերանայվում են Հիմնադրամի Ղեկավարության կողմից՝ սեզմենտին միջոցներ հատկացնելու որոշում կայացնելու համար և գնահատելու դրա կատարումը: Այս ֆինանսական հաշվետվությունների շրջանակներում Հիմնադրամի աշխարհագրական սեզմենտները ներկայացված են հիմնվելով գործընկերների գտնվելու վայրի վրա՝ հիմնվելով ավելի շուտ տնտեսական ռիսկի, քան իրավաբանական ռիսկի վրա:

3.6 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Հիմնադրամից, և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամտի ճանաչումը:

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսակիր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակներով պահվող կամ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող գործիքների, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

4 Սեզմենտային հաշվետվություններ

ՄՖՀՍ 8-ի առումով Հիմնադրամի գործառնությունները տարանջատված չեն գործառնական սեզմենտների և հանդիսանում են մեկ ամբողջական միավոր: Հիմնադրամի գլխավոր գործառնական որոշումներ կայացնող մարմնի կողմից իրականացվում են որոշումներ միասնական արդյունքների հիման վրա, և բացակայում է որևէ գործառնական սեզմենտի առանձնացում ընդհանուր գործառնություններից: Հիմնադրամի ակտիվները հիմնականում տեղաբաշխված են Հայաստանի Հանրապետության տարածքում: Հիմնադրամի եկամուտները ստացվում են Հայաստանյան աղբյուրներից:

5 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2016թ. հունվարի 01-ից մինչև 2016թ. հունիսի 30-ին ավարտված ժամանակաշրջան	2015թ. սեպտեմբերի 16-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջան
Ժամանակաշրջանի սկզբի մնացորդ	5,162	-
Ժամանակաշրջանի արդյունքում ճանաչված փոխհատուցում	(2,665)	5,162
Ժամանակաշրջանի վերջի մնացորդ	2,497	5,162

2015թ. դեկտեմբերի 31-ից մինչև 2016թ. հունիսի 30-ին ավարտված ժամանակաշրջանի հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Այլ համա- պարփակ ֆինան- սական արդյունք- ներում ճանաչված	Շահույթում կամ վնասում ճանաչված	2016թ. հունիսի 30-ի դրությամբ
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>				
Վարկեր	2,102	-	(1,024)	1,078
Չօգտագործված հարկային վնաս	3,060	-	(1,641)	1,419
	5,162	-	(2,665)	2,497
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	5,162	-	(2,665)	2,497

Հետաձգված հարկային ակտիվների մեծ մասը ենթակա են փոխհատուցման մեկ տարվա ընթացքում:

6 Վարկեր

Հազար դրամ	2016թ. հունիսի 30-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆիզիկական անձիք	569,411	672,092
Անհատ ձեռնարկատերեր	74,064	315,694
Մասնավոր ձեռնարկություններ	49,633	74,819
	693,108	1,062,605
Արժեզրկումից պահուստներ վարկերի գծով	(5,666)	(10,582)
Ընդամենը վարկեր	687,442	1,052,023

2016թ. հունիսի 30-ի դրությամբ ժամկետանց վարկերի գումարը կազմել է ընդամենը 8,229 հազար դրամ:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ժամկետանց վարկերի գումարը կազմել է ընդամենը 934 հազար դրամ և վերաբերվում է ֆիզիկական անձանց տրամադրված վարկերին:

Միջին արդյունավետ տոկոսադրույքը կազմում է ՀՀ դրամով վարկերի համար 22.29% և ԱՄՆ դոլարով վարկերի համար 18.17%:

Վարկերի արժեզրկման գնահատման համար կիրառված հիմնական ենթադրություններ և դատողություններ

Հիմնադրամը չունի անհատական հիմունքով էական հանդիսացող վարկեր, այդ իսկ պատճառով դեկավարությունը վարկերի արժեզրկումը որոշում է արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման հիման վրա:

Այս գնահատումների փոփոխությունն ազդեցություն կունենա վարկերի արժեզրկման գծով պահուստի վրա:

Վարկային պորտֆելի ծագումը

2015թ. դեկտեմբերին Հիմնադրամը գնեց վարկեր հինգ վարկային կազմակերպություններից («Նախաձեռնող»), որոնք ծառայում են Հիմնադրամի կողմից թողարկված պարտատոմսերի պարտավորությունների մարման գործիքի աղբյուր:

Ձեռք բերված վարկերի բաշխումը գնման պահին ըստ Նախաձեռնողների հետևյալն է.

Նախաձեռնողներ	հազար դրամ	
	Դրամային պորտֆել	Դոլարային պորտֆել
Կամուրջ ՈՒՎԿ	198,242	189,960
ՔԱՐԴ Ագրո-Կրեդիտ ՈՒՎԿ	164,149	-
Գառնի-Ինվեստ ՈՒՎԿ	35,247	-
Գլոբալ Կրեդիտ ՈՒՎԿ	67,592	132,082
Նոր-Հորիզոն ՈՒՎԿ	30,647	287,579
Ընդամենը	495,877	609,621

Վարկերը ձեռք են բերվել հաշվեկշռային արժեքով և այնուհետև զեղջվել արդյունավետ տոկոսադրույքային չափով:

Վարկային պորտֆելի ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերի վերլուծությունն ըստ հաճախորդների ունի հետևյալ տեսքը.

Հազար դրամ	2016թ. հունիսի 30-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Գյուղատնտեսություն	286,725	456,700
Առևտուր	149,506	231,329
Սպառողական	152,260	224,105
Արդյունաբերություն	57,685	75,738
Այլ	46,932	74,733
	693,108	1,062,605
Արժեզրկումից պահուստներ վարկերի գծով	(5,666)	(10,582)
Ընդամենը վարկեր	687,442	1,052,023

Ինչպես նշված է 16 ծանոթագրությունում, 2016թ. հունիսի 30-ի դրությամբ վարկերի գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Վարկային պորտֆելին ներհատուկ այլ ռիսկերը բացահայտված են 15 ծանոթագրությունում: Տեղեկատվությունը կապակցված անձանց վերաբերյալ բացահայտված է 18 ծանոթագրությունում:

7 Դեբիտորական պարտքեր ֆինանսական կազմակերպություններից

Դեբիտորական պարտքերը ֆինանսական կազմակերպություններից ներառում են հիմնականում Հիմնադրամին վաճառված վարկերից մարումների գծով մուտքերը: Քանի որ Նախաձեռնողները հանդիսանում են նաև վաճառված վարկերի սպասարկողները՝ վարկերի մարումներից մուտքերը հավաքագրվում են Նախաձեռնողների միջոցով և պայմանագրային հիմունքներով պարբերաբար փոխանցվում են Հիմնադրամին:

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

8 Զուտ ակտիվներ

8.1 Մասնակցության վկայագրեր

Հիմնադրամի կողմից վարկային պորտֆելի արժեթղթավորման համար վարկային գրավչություն ապահովելու անհրաժեշտությունից, Հիմնադրամը թողարկեց ոչ փաստաթղթային, անվանական, ոչ բաժնային և ձայնի իրավունք չտվող հինգ դասի դրամային մասնակցության վկայագրեր, յուրաքանչյուրը մեկ ՀՀ դրամ անվանական արժեքով և երեք դասի դոլարային մասնակցության վկայագրեր, յուրաքանչյուրը մեկ ԱՄՆ դոլար անվանական արժեքով:

Մասնակցության վկայագրերի մարումն իրականացվելու է Հիմնադրամի լուծարումից առաջ, և այն դեպքում, երբ ամբողջովին կմարվեն Հիմնադրամի կողմից թողարկված պարտատոմսերը:

Բոլոր մասնակցության վկայագրերը ձեռք են բերվել Նախաձեռնողների կողմից, և բաշխվել են հետևյալ կերպ:

Նախաձեռնող	Տեղաբաշխման գին (դրամային) հազար դրամ	Տեղաբաշխման գին (դոլարային) հազար դրամ	Ընդամենը տեղաբաշխված հազար դրամ
Կամուրջ ՈՒՎԿ	22,053	-	22,053
ՔԱՐԴ Ագրո-Կրեդիտ ՈՒՎԿ	18,258	21,302	39,560
Գլոբալ Կրեդիտ ՈՒՎԿ	7,519	14,525	22,044
Գառնի-Ինվեստ ՈՒՎԿ	3,921	-	3,921
Նոր-Հորիզոն ՈՒՎԿ	3,420	31,953	35,373
Ընդամենը	55,171	67,780	122,951

9 Թողարկված պարտքային արժեթղթեր

Հազար դրամ

	2016թ. հունիսի 30-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընթացիկ պարտատոմսեր	512,931	573,785

Ոչ ընթացիկ պարտատոմսեր	117,600	426,066
Ընդամենը թողարկված պարտքային ամբողջեր	630,531	999,851

2015թ. դեկտեմբերի 14-ին Հիմնադրամը թողարկել է ֆիքսված տոկոսադրույքով արժեկտրոնային պարտատոմս 44,646 հատ 10,000 դրամ անվանական արժեքով 446,260 հազար դրամ գումարի չափով և 11,328 հատ 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով 1,132.8 հազար ԱՄՆ դոլար գումարի չափով պարտատոմսեր, որոնք ցուցակված են ՆԱՍԴԱԲ ՕԷՄԷՔՍ Արմենիա-ում: 2016թ. հունիսի 30-ի դրությամբ դրամային պարտատոմսերի անվանական արժեքը կազմում է 6,928 դրամ, իսկ դոլարային պարտատոմսերի անվանական արժեքը՝ 58.88 ԱՄՆ դոլար:

2016թ-ի հունիսի 30-ի դրությամբ Հիմնադրամի կողմից թողարկված պարտքային արժեթղթերի գծով տարեկան արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 15% ՀՀ դրամի համար և 8.5% ԱՄՆ դոլարի համար:

Պարտատոմսերը թողարկվել են 3 տարի ժամկետով, 18 ամիս երկարացման հնարավորությամբ, մինչև վարկային պորտֆելի ամբողջական մարումը:

Պարտատոմսերի մարման ապահովություն են հանդիսանում վարկերը:

Պարտատոմսերը երաշխավորված են ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության կողմից՝ պարտատոմսերի անվանական արժեքի 50%-ի չափով:

Հաշվետու ժամականաշրջանում Հիմնադրամը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ արժեթուղթ:

Հիմնադրամի տոկոսային և արտարժույթային ռիսկերի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 15-ում:

10 Այլ ընթացիկ պարտավորություններ

31.12.2015թ. դրությամբ այլ ընթացիկ պարտավորությունների հիմնական մասը ներառում է Նախաձեռնողներից վարկերի չվճարված մասը (հանդիսանում է որպես երաշխիք և կարճաժամկետ պարտավորություն), որը 2016թ. հունիսի 30-ի դրությամբ մարվել է:

11 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր

Հազար դրամ	01.01.2016-30.06.2016
Վարկերի սպասարկման ծախսեր	(3,414)
Կառավարման վարձի ծախսեր	(3,874)
Պարտատոմսերի ցուցակման ծախսեր	(774)
Շուկա ստեղծողի ծառայության ծախսեր	(898)
Ռեեստրավարում և հաշվի պահպանություն	(235)
Բանկային և այլ ծախսեր	(219)
Ընդամենը այլ ծախսեր	(9,414)

12 Շահութահարկի գծով փոխհատուցում

Հազար դրամ	01.01.2016-30.06.2016
Հետաձգված հարկ (տե՛ս ծանոթագրություն 5)	-
	-

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2016թ. հունիսի 30-ին ավարտված ժամանակաշրջան	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Արդյունք մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	-	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	-	20
Դրական փոխարժեքային տարբերություն	-	-
Շահութահարկի գծով փոխհատուցում	-	20

13 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

13.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Հիմնադրամը իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես՝ ծանոթագրություն 16):

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Հիմնադրամը իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Հիմնադրամը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա (Տես ծանոթագրություն 18):

Վարկերի արժեզրկում

Հիմնադրամը գնահատում է խնդրահարույց վարկերը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք առկա են արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ:

Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբեր լինել՝ հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների:

Նշանակալի վարկերի համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Հիմնադրամը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ, այն դիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են վատթարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության մեջ և տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թերությունները կամ դրամական հոսքերի նվազումները:

Ջուր ակտիվներ

Հիմնադրամի ղեկավարությանը, հաշվի առնելով, որ Հիմնադրամի կողմից թողարկված մասնակցության վկայագրերը իրավունք են տալիս զուտ ակտիվների համամասնական բաժնի նկատմամբ Հիմնադրամի լուծարման դեպքում և այն ստորադասված է մնացած բոլոր պարտավորություններից, որոշել է այս գործիքը դասակարգել որպես զուտ ակտիվների գործիք:

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տես 17.3 ծանոթագրությունը:

14 Ֆինանսական գործիքներ

14.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

14.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2016թ. հունիսի 30-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր	687,442	1,052,023
Դեբիտորական պարտքեր ֆինանսական կազմակերպություններից	16,859	31,363
Մնացորդներ բանկերում	59,610	140,230
	763,911	1,223,616

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2016թ. հունիսի 30-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Թողարկված պարտքային արժեթղթեր	630,531	999,851
Այլ ընթացիկ պարտավորություններ	689	126,564
	631,220	1,126,415

15 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Հիմնադրամը չի ներգրավված սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Հիմնադրամը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժույթային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Հիմնադրամի ԱՄՆ դոլարով արտահայտված վարկերից և թողարկված պարտքային արժեթղթերից:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Հիմնադրամը ենթարկում է արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարները արտահայտված են հազար դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված	ԱՄՆ դոլար
2016թ. հունիսի 30-ի դրությամբ	
<i>Ֆինանսական ակտիվներ</i>	
Վարկեր	356,920
Դեբիտորական պարտքեր ֆինանսական կազմակերպություններից	3,050
Մնացորդներ բանկերում	32,250
	392,220
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>	
Թողարկված պարտքային արժեթղթեր	(319,201)
Այլ ընթացիկ պարտավորություններ	(11)
	(319,212)

Զուտ արդյունք	73,008
<hr/>	
Հոդված 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար
<i>Ֆինանսական ակտիվներ</i>	
Վարկեր	581,023
Դեբիտորական պարտքեր ֆինանսական կազմակերպություններից	4,445
Մնացորդներ բանկերում	64,367
	<hr/> 649,835
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>	
Թողարկված պարտքային արժեթղթեր	(550,289)
Այլ ընթացիկ պարտավորություններ	(65,438)
	<hr/> (615,727)
Զուտ արդյունք	34,108

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% աճին: 10%-ը ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով:

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ 10%-ով կունենա հետևյալ ազդեցությունը:

	ԱՄՆ դոլարի ազդեցություն
	2016թ. հունիսի 30-ի դրությամբ
Արդյունք	7,300
	<hr/> 7,300
	ԱՄՆ դոլարի ազդեցություն
	2015թ. սեպտեմբերի 16-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջան
Արդյունք	3,410
	<hr/> 3,410

Վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Հիմնադրամի՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

ա) Տոկոսադրույքային ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Հիմնադրամի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: 2015թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը չի ունեցել փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական

կորուստներ կրել: Այս ռիսկի ազդեցությունը Հիմնադրամի համար առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են վարկերը, դեբիտորական պարտքերը: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2016թ. հունիսի 30-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ		
Վարկեր	687,442	1,052,023
Դեբիտորական պարտքեր ֆինանսական կազմակերպություններից	16,859	31,363
Մնացորդներ բանկերում	59,610	140,230
	763,911	1,223,616

Գրավ

Հիմնադրամը կիրառում է բազմաթիվ միջոցներ վարկային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում և հիմնական միջոցներից մեկն է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը: Ձեռքբերված վարկերի համար գրավի հիմնական տեսակներն են.

- Անշարժ գույքը,
- Սարքավորումներ և փոխադրամիջոցներ,
- Երաշխավորություններ:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Հիմնադրամը ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները: Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով: Հիմնադրամը իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Հիմնադրամի դրամական միջոցները և վարկերը գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը: Վարկերից դրամական հոսքերը պայմանագրով ենթակա են ստացման 3 տարվա ընթացքում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2016թ. հունիս 30-ի դրությամբ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ակնկալվող ժամկետների.

Հազար դրամ	Հաշվեկշռային արժեք	մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարուց ավելի
Ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ	59,610	59,610	-	-	-	-
Վարկեր	687,442	36,497	82,584	118,115	185,071	265,176
Ընդամենը ֆինանսական	747,052	96,107	82,584	118,115	185,071	265,176

ակտիվներ

Ֆինանսական

պարտավորություններ

Թողարկված պարտքային արժեթղթեր

(627,111) - (135,421) (120,659) (185,417) (185,614)

Ընդամենը Ֆինանսական

պարտավորություններ

(627,111) - (135,421) (120,659) (185,417) (185,614)

Զուտ դիրք

119,941 96,107 (52,837) (2,544) (346) 79,561

16 Իրական արժեքի չափում

Հիմնադրամը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),

2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),

3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

16.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Հետևյալ աղյուսակում ցույց են տրված նշված մակարդակները՝ պարբերական սկզբունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հիերարխիայում՝ 2016թ. հունիսի 30-ի դրությամբ:

Հազար դրամ	2016թ. հունիսի 30-ի դրությամբ				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Իրական արժեք	Հաշվեկշռային արժեք
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ					
Վարկեր	-	687,443	-	687,443	687,443
Դեբիտորական պարտքեր ֆինանսական կազմակերպություններից	-	16,859	-	16,859	16,859
Մնացորդներ բանկերում	-	59,610	-	59,610	59,610
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	630,531	-	630,531	630,531

Հազար դրամ	2016թ. հունիսի 30-ի դրությամբ				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Իրական արժեք	Հաշվեկշռային արժեք
Այլ ընթացիկ պարտավորություններ	-	689	-	689	689

Հետևյալ աղյուսակում ցույց են տրված նշված մակարդակները՝ պարբերական սկզբունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հիերարխիայում՝ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Իրական արժեք	Հաշվեկշռային արժեք

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

Վարկեր	-	1,052,023	-	1,052,023	1,052,023
Դեբիտորական պարտքեր ֆինանսական կազմակերպություններից	-	31,363	-	31,363	31,363
Մնացորդներ բանկերում	-	140,230	-	140,230	140,230

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թողարկված պարտքային արժեթղթեր	-	999,851	-	999,851	999,851
Այլ ընթացիկ պարտավորություններ	-	126,564	-	126,564	126,564

17 Պայմանականություններ

17.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով, ինչպես նաև միջազգային տնտեսական ճգնաժամը: Հայաստանի Հանրապետության հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վատթարացումը հանգեցրել է արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը գտնվում է մեծ կախման մեջ: Հանքահումքային ապրանքների միջազգային գների հետագա անկումը, անորոշությունները՝ պայմանավորված ուղղակի կապիտալ ներդրումների ներգրավման հնարավորություններով, գնաճը, կարող են հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Հիմնադրամի վիճակի վատթարացման:

Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Հիմնադրամը ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքի վրա: Հիմնադրամը ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Հիմնադրամի տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

17.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

17.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել: Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

18 Կապակցված կողմեր

Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են Հիմնադրին և ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերությունները, ինչպես նկարագրված է ստորև:

18.1 Վերահսկողություն

Հիմնադրամի նկատմամբ վերահսկողություն որևէ անձ կամ կազմակերպություն չունի: Հիմնադրամի կառավարման մարմիններն են Հիմնադրամի Կառավարիչը և Հիմնադրամի տնօրենների խորհուրդը: Հիմնադրամի տնօրենների խարհուրդը հիմնականում բաղկացած է Նախաձեռնողների ղեկավարներից և հանդիսանում է Հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմինը: Հիմնադրամի Կառավարիչը «Կապիտալ Ինվեստմենթս» ՓԲԸ-ն է, որը իրականացնում է Հիմնադրամի ընթացիկ կառավարումը:

